ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մայիսի 2021 թվականի №---Ա

ք.Երևան

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի ապրիլի 1-ի №01/17/834-2021 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ իր և «Էներգո-Պրո Ջորջիա» ընկերության միջև 2015 թվականի ապրիլի 17-ին կնքված՝ ընկերությանը պատկանող «Նինոծմինդա» 110 կՎ լարման ընդհանուր 35800 գծամետր երկարությամբ էլեկտրահաղորդման օդային գծի Վրաստանի տարածքի 21558 գծամետր երկարությամբ հատվածի վարձակալության պայմանագրի ժամկետը 5 տարով երկարաձգման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2021 թվականի ապրիլի 20-ի №ԳԲ/34.1-Մ2-2/1271-2021 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի մայիսի 12-ի №02/12.8/15445-2021 գրությամբ Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումների համաձայն՝ Գործարքի մասով առարկություններ առկա չեն,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանը և պետական շահերին, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության և «Էներգո-Պրո Ջորջիա» ընկերության միջև 2015 թվականի ապրիլի 17-ին կնքված՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող «Նինոծմինդա» 110 կՎ լարման օդային գծի Վրաստանի տարածքի 21558 գծամետր երկարությամբ հատվածի վարձակալության պայմանագրի ժամկետի 5 տարով երկարաձգման գործարքի կնքմանը:
2. Սահմանել, որ Գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝
   1) Գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը,
   2) Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- մայիսի 2021թ.